Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ------ 2010թ. №— –Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի, 82-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Ներգրավել մասնագիտացված աուդիտորական կազմակերպություն, որը Հայաստանի Հանրապետությունում կունենա նվազագույնը 5 տարվա աուդիտորական գործունեության փորձ:

Ցանկալի կլինի, որ ունենա միջազգային ճանաչում և նախկինում աուդիտորական ծառայության մատուցման փորձ պետական կառավարման և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակներ՝
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Աուդիտորական մասնագիտացված կազմակերպություն ներգրավելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ:

Փաստաթուղթը նախաձեռնելու նպատակն է կատարել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջը, ինչպես նաև պատշաճ կերպով ուսումնասիրել և անկախ մասնագիտացված եզրակացություն ներկայացնել Երևան քաղաքի ավագանուն Երևան քաղաքի տարեկան բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ:

Նախաձեռնության հեղինակներ՝
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ **Գ. Գասպարյան**

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Աուդիտորական մասնագիտացված կազմակերպություն ներգրավելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին:

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախաձեռնության հեղինակներ՝
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ **Գ. Գասպարյան**

Պ. Փլավչյան